ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 762-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի «Ներդրումային ծրագրերին հավանություն տալու և «Սպայկա» ու «Արմսանպրոդակտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին» N 762-Ա որոշման N 2 հավելվածի՝

1) Վերնագրի, 1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերի «60» թիվը փոխարինել «50» թվով.

2) 1-ին կետի «86.8» թիվը փոխարինել «75.6» թվով, իսկ «Առանձին ջերմատները բաժանված են լինելու 5-հեկտարանոց միավորների, որոնք 4 և 6 բլոկներով» բառերը՝ «Ջերմատնային տնտեսությունը բաղկացած է լինելու 8-ից 15 բլոկներից կազմված ջերմատներից, որոնք» բառերով,

3) 3-րդ կետի «Ֆրանսիական «Ռիշել» ընկերության կողմից մշակված կիսափակ պոլիմերային ծածկով ջերմատնային տեխնոլոգիան մրցակցային առավելություն է ապահովում։» և «9,7 մետր բարձրությամբ (գագաթում)» բառերը հանել։

4) 6-րդ կետի «88» թիվը փոխարինել «20» թվով.

5) 7-րդ կետի «2019» թիվը փոխարինել «2028» թվով։

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունների հիման վրա համապատասխան փոփոխություններ կատարել Երևան համայնքի և «Արմսանպրոդակտ» սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 2017 թվականի հուլիսի 18-ին կնքված «Հողամասի նվիրաբերության պայմանագրում»։